

# ԵՂԵՔ ՆԱԽԱՁԵՌՆՈՂ

Հետևեք երեխայի լեզվի ձևավորման և զարգացման փուլերին:

Օննդյան օրվանից մինչև 5 տարեկանը խուլ երեխային նախապատրաստեք մանկապարտեզ հաճախելուն:



## ԴՈՒՔ ՁԵՐ ԵՐԵԽԱՅԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՊԱՇՏՊԱՆՆ ԵՔ


Եթե ձեր խուլ/վատ լսող երեխան հետ է մնում ASL ամերիկյան ժեստերի և/կամ անգլերեն լեզվի զարգացման փուլերից, անմիջապես խորհրդակցեք երեխայի IFSP կամ IEP կրթական ծրագրերի անձնակազմի հետ: Խուլ/վատ լսող երեխաները լիովին ունակ են ըստ իրենց տարիքային մակարդակի հաղորդակցվել առնվազն մեկ լեզվով՝ ASL ամերիկյան ժեստերի կամ անգլերեն: Փոփոխություններ կատարեք ձեր երեխայի ծրագրում, որոնք կօգնեն նրան ձեռք բերել իր տարիքին համապատասխան լեզվական հմտություններ: Հիշեք, նպատակն այն է, որ ձեր երեխան ձեռք բերի իր տարիքին համապատասխան լեզվական հմտություններ և պատրաստ լինի մանկապարտեզ հաճախելուն հինգ տարեկանում: Լեզվի զարգացման փուլերը հասանելի են Կալիֆոռնիայի կրթության վարչության կայքում՝

<http://www.cde.ca.gov/sp/ss/dh/>



Photo credit: Clare Cassidy Photography.

# Ծնողի անկետա Լեզվի զարգացման փուլերը 0-5 տարեկան հասակում



Իմացեք խոսքի զարգացման փուլերը: Եղեք նախաձեռնող:

# Խուլ երեխայի խոսքի վաղ զարգացման սանդղակ

Ստուգեք ձեր երեխայի խոսքի զարգացումը և կիսվեք արդյունքներով **IFSP**-ի և **IEP**-ի յուրաքանչյուր հանդիպման ժամանակ

Ծնողի անկետան ձեզ կօգնի հետևել ձեր երեխայի լեզվի զարգացմանը: Դուք ձեր երեխայի վաղ մանկական զարգացման կամ նախադպրոցական հաստատության ուսուցչի հետ պետք է քննարկեք, թե արդյոք ձեր երեխայի լեզվի զարգացումը ըստ տարիքային խմբի համապատասխանում է այս սանդղակին: Նշեք յուրաքանչյուր ցուցանիշի դիմաց, եթե ձեր երեխան համապատասխանում է: Ակտիվորեն հետևեք ձեր երեխայի խոսքի զարգացմանը, որպեսզի նա պատրաստ լինի մանկապարտեզ հաճախելուն 5 տարեկանում:

## Մկսեք այստեղից՝ Ծնունդ -1 տարեկան



### 1-2 տարեկան

- Ձեր երեխան ժպտում է ձեզ տեսնելիս:
- Ձեր երեխան դիտում է շուրջը և ուշադիր նայում մարդկանց դեմքին:
- Ձեր երեխան ճանաչում է շրջապատող միջավայրը:
- 12-րդ ամսում ձեր երեխան 1-3 ժեստ է անում և/կամ բառ է արտաբերում:



- Ձեր երեխան ճանաչում է իր անունը ձայնով կամ ժեստերով:
- Ձեր երեխան ժեստերով կամ արտասանելով տալիս է իր և մյուսների անունները:
- Ձեր երեխան 1-2 խոսք է փոխանակում:
- Ձեր երեխան օգտագործում է բացականչական արտահայտություններ:



### 2-3 տարեկան

- 2½ տարեկանում ձեր երեխան հարցերին պատասխանում է՝ այո կամ ոչ:
- Ձեր երեխան մոտ 80% դեպքերում հասկանալի բառեր կամ ժեստեր է օգտագործում:
- Ձեր երեխան իր կարիքները հայտնում է ձայնի կամ ժեստերի միջոցով:



### 3-4 տարեկան

- Ձեր երեխան տրամաբանորեն պատասխանում է հարցերին:
- Ձեր երեխան զանազանում է առարկաները տարբեր դիտանկյուններից:
- Ձեր երեխան ազատ, պարզ հաղորդակցվում է: Նրան հասկանում են ընտանիքի անդամները և ծանոթ մեծահասակները:

### 4-5 տարեկան

- Ձեր երեխան հարցնում է բառերի և ժեստերի նշանակության մասին:
- Ձեր երեխան գիտի 2,500+ բառ և/կամ ժեստ
- Ձեր երեխան կարողանում է շարադրել մտքերը:

